



Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի

2021թ. հունվարի 30-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր՝ *[Signature]* Ռ. Խ. Հակոբյան

«30» հունվար 2021թ.

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ  
(փոփոխություններով)**

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) հանրության հրեա կապերի (PR) ապահովման քաղաքականությունը ներառում է Համալսարանի և հասարակության միջև կապերի ապահովման սկզբունքները, նպատակները, հիմքերը, կառուցակարգերը, հիմնական գործիքներն ու ընթացակարգերը:
2. Համալսարանի հանրային կապերն իրականացվում են հետևյալ սկզբունքներով.
  - ա) օրինականություն,
  - բ) ազնվություն,
  - գ) կամավորություն,
  - դ) բարոյական նորմերի պահպանում,
  - ե) հետադարձ կապերի ապահովում:
3. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականության հիմնական առաքելությունն է Համալսարանի՝ որպես Գեղարքունիքի մարզում գործող բարձրագույն ուսումնական հաստատության, պատշաճ ներկայացումը, Համալսարանի վերաբերյալ հավաստի տեղեկատվության մատչելիության, տեղեկատվական ուղիների բազմազանության ապահովումը, հանրության պահանջներին համապատասխանելու համար հանրաային կարծիքի ուսումնասիրությունը, Համալսարանի գործունեության արդյունքների ներկայացումը հանրության լայն շրջանակներին:
4. Համալսարանի հանրության հետ կապերի քաղաքականության նպատակներն են.
  - ա) հանրությանը Համալսարանի մասին ընդհանուր իրազեկում,
  - բ) Համալսարանի դիմորդներին և այլ շահառուներին ճշգրիտ և օբյեկտիվ տեղեկատվության

մատուցում,

գ) Համալսարանի բարի համբավի ձևավորում և ամրապնդում,

դ) Համալսարանի գործընկերների շրջանակի ընդլայնում,

ե) Համալսարանի արտաքին կապերի ակտիվացում, համագործակցության ծրագրերի իրականացում:

5. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականության իրավական հիմքերն են.

ա) ՀՀ օրենսդրությունը,

բ) Համալսարանի կանոնադրությունը,

գ) Համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի կանոնակարգը,

դ) Համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգը,

ե) Համալսարանի էթիկայի կանոնները

զ) Համալսարանի այլ իրավական ակտերը:

6. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականության հիմնական ուղղություններն են.

ա) տպագրական նյութերի հրատարակում և անվճար տարածում,

բ) էլեկտրոնային տեղեկատվության նյութերի ապահովում և տարածում համացանցում,

գ) հեռուստա և ռադիոհաղորդումների միջոցով հանրային կապերի ապահովում,

դ) աշխատանք դիմորդների, նրանց ծնողների, շրջանավարտների, գործընկեր կազմակերպությունների, այլ ներքին ու արտաքին շահակիցների հետ:

7. Համալսարանի արտաքին կապերի ապահովման հիմնական կառուցակարգերն են.

ա) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տեղեկատվության տրամադրում հանրության հետ կապերի և լրատվության բաժնին,

բ) արտաքին կապերի և լրատվության բաժնի կողմից տեղեկատվության մշակում և տարածում,

գ) հանրության հետ կապերի ապահովման քաղաքականության իրականացման այլ կառուցակարգերի կիրառում:

8. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականության հիմնական գործիքներն են.

ա) զանգվածային լրատվության տպագիր և էլեկտրոնային միջոցները,

բ) Համալսարանի համացանցային կայքը,

գ) մամուլում հրատարակությունները,

դ) Համալսարանի կողմից գործընկեր հաստատությունների հետ պայմանագրերի և համագործակցության հուշագրերի կնքումը,

ե) այլ գործիքների կիրառումը:

9. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման ընթացակարգերը ներառում են.

ա) հանդիպումներ գործընկեր կազմակերպությունների հետ,

բ) տպագիր և էլեկտրոնային նյութերի տարածում,

գ) Համալսարանից դուրս միջոցառումների կազմակերպում,

- դ) Համալսարանում հանդիպումների, ցերեկույթների, «բաց դռների», «կլոր սեղանների», այլ ձևաչափով աշխատանքների, տարաբնույթ միջոցառումների կազմակերպում,
- ե) այլ ընթացակարգերի կիրառում:

10 Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է գովազդային արշավների կազմակերպումը, Համալսարանի կրթական, գիտահետազոտական գործունեության լուսաբանումը, գործընկեր կազմակերպությունների, շահակիցների հետ համագործակցության ապահովումը:

10.1. Այս նպատակով կիրառվող ընթացակարգերն են.

- ա) «Համալսարանական ժամ» հաղորդաշարի պատրաստում և հեռարձակում,
- բ) գործունեության տարբեր ուղղություններով ֆիլմերի նկարահանում,
- գ) «Տարեգրություն ԳՊՀ պատմությունից» հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում,
- դ) ռադիոհաղորդումների շարքի կազմակերպում «ԳՊՀ-ն երեկ, այսօր, վաղը» խորագրով:

11. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է Համալսարանում կրթական գործընթացի մասին տեղեկատվության տրամադրումը, որը ներառում է տեղեկատվություն ուսման վարձերի և հնարավոր զեղչերի, ուսանողներին աջակցող հիմնադրամների, տեղեկատվություն ստանալու բոլոր հնարավոր աղբյուրների, միջազգային համագործակցության, Համալսարանի կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ:

11.1. Այս նպատակով կիրառվող ընթացակարգերն են.

- ա) դիմորդների համար նյութերի պատրաստում, որտեղ մատչելի կներկայացվեն կրեդիտային համակարգի առանձնահատկությունները,
- բ) դիմորդների և առաջին կուրսեցիների համար ուսումնառության և Համալսարանի գործունեության մասին, տեղեկատվական նյութերի նախապատրաստում,
- գ) Համալսարանի ֆակուլտետների և դիմորդների միջև համագործակցության սերտացում,
- դ) [www.gsu.am](http://www.gsu.am) ինտերնետային կայքում դիմորդներին հետաքրքրող առաջնային և անհրաժեշտ տեղեկատվության տեղադրում:

12. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է Համալսարանի գիտական ներուժի ներկայացումը:

12.1. Այս նպատակով կիրառվող ընթացակարգերն են.

- ա) Համալսարանի գիտական կյանքի վերաբերյալ գիտահանրամատչելի հոդվածների տպագրում,
- բ) Համալսարանի կայքը՝ գիտական գործունեության մասին տեղեկատվությամբ համալրում:
- գ) գործարար աշխարհի հետ՝ գիտահետազոտական գործունեությունը ֆինանսավորելու նպատակով կապերի սերտացում,
- դ) Համալսարանում աշխատող անվանի գիտնականներին հանրությանը ներկայացումը:

13. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է Համալսարանի ներքին կապերին ուղղված աշխատանքները, որոնց կարևոր խնդիրն է Համալսարանին պատկանելիության, համալսարանական լինելու զգացողության ամրապնդում դասախոսների, աշխատակիցների և ուսանողների շրջանում:

13.1. Այս նպատակով կիրառվող ընթացակարգերն են.

- ա) գիտական խորհրդի նիստերի կամ այլ ձևաչափով աշխատանքների ընթացքում ընդհանուր կարծիքի ձևակերպում Համալսարանին վերաբերող առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ,
- բ) Համալսարանի կորպորատիվ մշակույթի հիմնական տարրերի հստակեցում,
- գ) Համալսարանի տարբերանշաններով կրծքանշանների, գրիչների, թղթապանակների, ժամացույցների, և այլ պարագաների պատրաստում և պատվիրում աշխատակիցների և ուսանողների համար:

14. Համալսարանի արտաքին կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է համացանցային ակտիվության և համացանցում ներկայացվածության ապահովումը:

14.1. Այս նպատակով կիրառվող ընթացակարգերն են.

- ա) Համալսարանի տարածքում ազատ համացանցային կապի ապահովում,
- բ) Համալսարանի պաշտոնական կայքի թարմացում, բարելավում,
- գ) Համալսարանի ներկայացվածության ավելացում սոցիալական ցանցերում:

15. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է մասնակցությունը երկրի սոցիալ - մշակութային կյանքին:

15.1. Այս նպատակով իրականացվող ընթացակարգերն են.

- ա) Համալսարանի Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ինչպես նաև ուսանողական կառույցների գործունեության լուսաբանում,
- բ) սոցիալ-մշակութային ծրագրեր իրականացում:

16. Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է հանրային կարծիքի ուսումնասիրություններ:

16.1. Այս նպատակով իրականացվող ընթացակարգերն են.

- ա) հանրային կարծիքի հետազոտությունների պարբերաբար կազմակերպում,
- բ) հետազոտությունների արդյունքների վերլուծում և համապատասխան միջոցառումների ձեռնարկում, բարելավման ծրագրերի իրականացում: